ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

2017թ. հունիսի 20 N 78 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ ԳԱՅԱՆԵ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ հոդվածի 1-ին մասի, 161-րդ հոդվածի 2-րդ մասի և 162-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշումը՝ ***հրամայում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի գլխավոր մասնագետ Գայանե Անդրեասյանին տալ ամենամյա արձակուրդ՝ 2016 թվականի հունիսի 11-ից 2017 թվականի հունիսի 11-ն ընկած ժամանակահատվածի համար՝ 24 աշխատանքային օր տևողությամբ 2017 թվականի հուլիսի 3-ից օգոստոսի 4-ը ներառյալ:

Հիմք՝ Գ. Անդրեասյանի 2017 թվականի հունիսի 20-ի դիմումը:

2. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետին՝ <<Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն վճարել նաև լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին ամսական աշխատավարձի չափով:

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ